«COVID-19»-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ. ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, ճգնաժամ, չվերթ, COVID-19*

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: 80-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ երկու մենագրության հեղինակ է և երեք ուսումնական ձեռնարկի համահեղինակ:

Զբոսաշրջիկների թիվը Հայաստանում վերջին տարիներին դրսևորում է աճի միտում: Հոդվածում ներկայացվել է «COVID-19»-ի հնարավոր բացասական ազդեցությունն ինչպես ՀՀ, այնպես էլ այլ երկրների զբոսաշրջության ոլորտի վրա, քննարկվել են մի շարք երկրների և Հայաստանի ձեռնարկած միջոցառումները համավարակի հնարավոր բացասական հետևանքների մեղմման նպատակով, կատարվել են նաև որոշակի նախնական կանխատեսումներ:

Համաշխարհային տնտեսության վրա զբոսաշրջության հարաճուն ազդեցությունը մշտապես եղել է տարբեր հետազոտողների և կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Բավական է միայն նշել, որ 2018 թ. զբոսաշրջության համախառն ազդեցությունը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 10.4% կամ 8.8 տրիլիոն ԱՄՆ դոլար՝ ապահովելով 319 մլն աշխատատեղ[1]: Ըստ Ճանապարհորդությունների և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի տվյալների՝ 2018 թ. զբոսաշրջության համախառն ազդեցությունը ՀՀ ՀՆԱ-ում կազմել է 14.1% կամ 868,7 մլրդ դրամ՝ ապահովելով ընդհանուր զբաղվածության 12.5%-ը կամ 137000 աշխատատեղ[2]:

Վերջին տարիներին ՀՀ զբոսաշրջության զարգացման միտումները[3] թույլ էին տալիս ենթադրել, որ 2020 թ.

[1] TRAVEL & TOURISM ECONOMIC IMPACT 2019, WORLD, p. 1: https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/

[2] ARMENIA, 2019 ANNUAL RESEARCH: KEY HIGHLIGHTS, World Travel and Tourism Council: https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/

նույնպես զբոսաշրջությունը Հայաստանում կգրանցի աճի բարձր տեմպեր: Իհարկե, այս սցենարը շատ իրատեսական կլիներ, եթե 2020 թ. սկզբին ամբողջ աշխարհով մեկ չտարածվեր թագավարակը կամ COVID-19-ը, ինչը զգալի վնասներ է հասցնում համաշխարհային զբոսաշրջությանը:

Զբոսաշրջության և ճանապարհորդությունների համաշխարհային խորհրդի և Oxford Economics-ի նախնական հաշվարկներով (հիմնված համաշխարհային զբոսաշրջության նախորդ ճգնաժամերի փորձի վրա, որոնց պատճառը SARS-ի (ատիպիկ թոքաբորբ) և H1N1-ի (խոզի գրիպ) համաճարակներն էին) COVID-19-ի ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի վրա կարժենա առնվազն 22 մլրդ ԱՄՆ դոլար կամ ավելի քան 20 մլրդ եվրո: Դա առավել զգալի կլինի Ասիայում, և, առաջին հերթին, Չինաստանում, որտեղ ՀՆԱ-ի 11%-ը բաժին է ընկնում զբոսաշրջությանը, և որն այնտեղ վերջին տարիներին աճում էր 7%-անոց տեմպով: Oxford Economics-ի փորձագետները կարծում են, որ վնասի նախնական գնահատականը կարող է կրկնապատկվել և եռապատկվել, եթե COVID-19-ի տարածումը հնարավոր չլինի կասեցնել: Ամենաշատը կտուժեն չինացի զբոսաշրջիկներից կախված երկրները՝ Հոնկոնգը, Մակաոն, Թաիլանդը, Կամբոջան և Ֆիլիպինները[4]:

Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության 2020 թ. մարտի 3-ի նախնական գնահատականների՝ համաշխարհային զբոսաշրջիկների թիվը կնվազի 1-3%-ով (2019 թ. կազմել է 1461 միլիոն, իսկ 2020 թ. կանխատեսվում էր 1416-1446 միլիոն մարդ), ինչի հետևանքով զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերի կորուստը համաշխարհային մասշտաբով կկազմի 30-50 մլրդ եվրո[5]:

Իտալիայի որոշ շրջաններում փետրվարին արդեն չեղարկվեց մարտի հյուրանոցային ամրագրումների 90 տոկոսը՝ պատճառելով մոտ 200 մլն եվրոյի վնաս: Զբոսաշրջության մասնաբաժինը Իտալիայի ՀՆԱ-ում 13% է[6], հետևաբար՝ ոլորտի ճգնաժամը բազմարկչի էֆեկտով կարող է լուրջ խնդիրներ առաջացնել ամբողջ տնտեսությունում՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ երկրում ոչ միայն գնալով աճում է COVID-19-ով հիվանդների թիվը, այլև մեծանում մահացության ցուցանիշը (2020 թ. ապրիլի 6-ի տվյալներով՝ հիվանդացածների մոտ 12%-ի շրջանում արձանագրվել է մահ):

Ըստ որոշ գնահատումների՝ հունվարից ի վեր եվրոպական զբոսաշրջության ոլորտը 2 միլիոն զբոսաշրջիկ է կորցրել, ինչն ամսական 1 միլիարդ եվրոյի կորուստ է ենթադրում[7]:

Ըստ Զբոսաշրջության և ճանապարհորդությունների համաշխարհային խորհրդի 2020 թ. մարտի 13-ին հրապարակված կանխատեսումների՝ զբոսաշրջության ոլորտում 50 մլն աշխատատեղ կորստի ռիսկի տակ է, ինչը կհանգեցնի աշխատատեղերի 12-14%-ով նվազման, զբոսաշրջությունը կտուժի 25%-ով, ինչը հավասար է համաշխարհային զբոսաշրջության երեք ամսվա կորստին: Զբոսաշրջության և ճանապարհորդությունների համաշխարհային խորհուրդը նաև մի շարք առաջարկություններ է ներկայացրել երկրների կառավարություններին ճգնաժամից հետո արագ վերականգնման համար՝ կապված վիզայի ռեժիմի դյուրացման, հարկաբյուջետային քաղաքականության իրականացման հետ (նվազեցնել կամ հանել օդի, հյուրանոցների և այլ հարկեր), մասնավորապես՝

[3] Առավել մանրամասն տես, Գայանե Թովմասյան, Ինչպիսի՞ն էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2019 թվականին, և ի՞նչ սպասել 2020 թ. «կորոնավիրուսային համատեքստում». https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context

[4] Կորոնավիրուսից զբոսաշրջության ոլորտի վնասը կարող է $22 մլրդ կազմել, 2020, https://banks.am/am/news/newsfeed/18645?fbclid=IwAR2_SydgY8JopucN0w7_iMGe6qTkMQQfJmyaF7bKDos0JXfLraXtYNz1qpA

[5] Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020: https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf

[6] Coronavirus: Italy's tourism industry reports “worst crisis in recent history” after outbreak, 2020: https://www.thelocal.it/20200227/coronavirus-italian-regions-warn-tourism-is-on-its-knees-after-outbreak

[7] Հունվարին ԵՄ զբոսաշրջության ոլորտը կորոնավիրուսի պատճառով 1 միլիարդ եվրո է կորցրել, 2020, https://news.am/arm/news/563363.html

խթաններ տրամադրել բիզնեսին, հատկապես՝ ՓՄՁ-ներին՝ գործարարության շարունակականությունը պահպանելու նպատակով, աջակցել դեստինացիաներին՝ մեծացնելով մարքեթինգի վրա կատարվող ծախսերը, երբ դրանք պատրաստ կլինեն նորից ընդունելու զբոսաշրջիկների[8]:

Թեև զբոսաշրջության վրա COVID-19-ի բացասական ազդեցությանը, որոշ մասնագետներ պնդում են, որ դա հնարավորություն է ոլորտի հետագա զարգացման համար: Չվերթերի կտրուկ նվազեցման և մի շարք ընկերությունների աշխատանքի դադարեցման արդյունքում կրճատվել են ածխածնի երկօքսիդի արտանետումները՝ հանգեցնելով օդի և ջրի որակի բարելավման[9]: Ածխածնի երկօքսիդի համաշխարհային արտանետումների 5%-ը բաժին է ընկնում զբոսաշրջությանը, որի 75%-ն առաջանում է տրանսպորտի հետևանքով[10]: Սա, անշուշտ, դրական ազդեցություն կունենա բնական ռեսուրսների պահպանման վրա (հատկապես այն դեստինացիաների դեպքում, որտեղ զբոսաշրջիկների թվի հսկայական աճի հետևանքով նկատվում էր բնական ռեսուրսների որակի վատթարացում) և լավ ազդակ կարող է լինել ամբողջ աշխարհի համար առ այն, որ զբոսաշրջության կայուն զարգացման քաղաքականության իրագործումն այլընտրանք չունի:

2020 թ. փետրվարի 23-ին, COVID-19-ի տարածման հետ կապված, ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց փակել ՀՀ սահմանն Իրանի հետ[11], իսկ Չինաստանի քաղաքացիների համար փետրվարի 1-ից մինչև մարտի 31-ը՝ կասեցնել ազատ վիզայի ռեժիմը[12]: Իրանից ՀՀ ժամանած մարդկանց թիվը 2019 թ. 114811 էր, իսկ Չինաստանից եկածների թիվը՝ 14416[13]: 2018 թ. ժամանած իրանցի զբոսաշրջիկները կազմել են ընդհանուր զբոսաշրջիկների 6.8 տոկոսը, այսինքն՝ 112321 մարդ, իսկ 2019 թ.՝ 5.0 տոկոսը կամ 94719 մարդ: Ինչպես գիտենք, մարտի 21-ից իրանցիները նշում են Նովրուզը, և այդ ժամանակահատվածում, սովորաբար, մեծանում էր իրանցի զբոսաշրջիկների հոսքը Հայաստան:

Զբոսաշրջային գործակալությունները նշում են, որ, պայմանավորված COVID-19-ով, միջազգային զբոսաշրջիկները փետրվարից ի վեր չեղարկել են Հայաստանի հյուրանոցային տնտեսության օբյեկտներում իրենց կողմից նախօրոք կատարված ամրագրումները մարտ-ապրիլ և նույնիսկ հետագա ամիսների համար[14]:

ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2020 թ. մարտի 16-ի ժամը 18:30-ից մինչև նույն թվականի ապրիլի 14-ի ժամը 17:00-ն մեր երկրում հայտարարվեց արտակարգ դրություն[15]: Այսպիսով՝ արգելվեց ՀՀ պետական սահմանի բոլոր անցակետերով ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձանց մուտքը ՀՀ տարածք, որոնք ՀՀ են մուտք գործում պարետի որոշմամբ սահմանված համաճարակաբանական լարված իրավիճակ ունեցող երկրների ցանկում ներառված երկրներից, կամ մուտք գործելուն նախորդող 14

[8] Coronavirus puts up to 50 million Travel and Tourism jobs at risk says WTTC, 2020: https://www.wttc.org/about/media-centre/press-releases/press-releases/2020/coronavirus-puts-up-to-50-million-travel-and-tourism-jobs-at-risk-says-wttc

[9] Isabelle Durant, Tourism – A life line in free fall, 2020: https://unctad.org/en/pages/newsdetails.aspx?OriginalVersionID=2312

[10] Transport-related CO2 emissions of the tourism sector, Modelling results, UNWTO, 2019, p. 11, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284416660

[11] Իրանի հետ սահմանը փակ կմնա մինչև մարտի 24-ը, 2020, https://banks.am/am/news/newsfeed/18661

[12] 2 ամսով կասեցվում է Չինաստանի քաղաքացիների համար ՀՀ մուտքի վիզայի ազատ ռեժիմը, 2020, https://www.azatutyun.am/a/30410182.html

[13] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 256, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_6200.pdf

[14] Կորոնավիրուսի պատճառով եվրոպացի հազարավոր զբոսաշրջիկներ չեղարկել են հայաստանյան հյուրանոցներում մարտ-ապրիլի համար արված ամրագրումները, 2020, https://www.tert.am/am/news/2020/02/29/cancellation/3224005

[15] ՀՀ կառավարության որոշում, 16 մարտի 2020, 298–Ն, Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին, https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/?fbclid=IwAR00jM_nHx-8p74lNxfEdItbpOOgAFu9aeZqpH-74o8FZK6dLkKv7WOgHTew

օրվա ընթացքում գտնվել են այդ երկրներում, բացառությամբ՝ դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և նրանց ընտանիքների անդամների, այն դեպքերի, երբ պարետի որոշմամբ, հաշվի առնելով այդ երկրներում համաճարակային իրադրության իրավիճակը, թույլատրվում է այդ ցանկում ներառված երկրներից անձանց մուտք գործելը, և պարետի որոշմամբ՝ այլ առանձնահատուկ դեպքերի[16]:

Հաշվի առնելով վերոնշյալ զարգացումները՝ որոշ ավիաընկերություններ որոշում են կայացրել ժամանակավորապես չեղարկել իրենց կողմից դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս մի շարք ուղղությունների սպասարկումը (ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ հղմամբ)[17]:

Նշենք, որ այսօր աշխարհի բազմաթիվ երկրներ են ապրում և գործում արտակարգ իրավիճակի պայմաններում՝ փակելով սահմաններն այլ երկրների քաղաքացիների մուտքի համար, և ավիաընկերությունները չեղարկում են չվերթերը մի շարք երկրներում:

COVID-19-ով պայմանավորված՝ միջազգային օլիմպիական կոմիտեի որոշմամբ ամառային օլիմպիական խաղերը, որոնք պետք է անցկացվեին Տոկիոյում՝ 2020 թ. հուլիսի 24-ից օգոստոսի 9-ը, մեկ տարով հետաձգվեցին[18]: Նույն կերպ, ՈՒԵՖԱ-ի որոշմամբ Եվրոպայի ֆուտբոլի 2020 թ. առաջնությունը հետաձգվեց մեկ տարով և կանցկացվի 2021 թ. հունիսի 11-ից հուլիսի 11-ը[19]: Սա ենթադրում է սպորտային զբոսաշրջիկների թվի էական կրճատում 2020 թ.:

Իհարկե, համավարակի՝ զբոսաշրջության ոլորտի վնասները կրում են համաշխարհային բնույթ, և Հայաստանը չի կարող զերծ մնալ այդ ամենից:

Աշխարհի մի շարք երկրներ արդեն որոշակի միջոցառումներ են նախաձեռնել COVID-19-ի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը հաղթահարելու նպատակով:

Այսպես՝ Իտալիայի կառավարությունը, առաջնային համարելով աշխատողների պաշտպանությունը, պետք է վճարի նրանց աշխատավարձերի 80%-ը: Միաժամանակ, երկիրը 500 միլիոն եվրոյի հիմնադրամ է բացել՝ վերականգնելու ավիացիոն արդյունաբերության և «Alitalia»-ի կրած վնասները:

Հոնկոնգը զբոսաշրջության ոլորտում բիզնեսի շարունակականությունն ապահովելու նպատակով ստեղծել է զբոսաշրջային գործակալությունների հակահամաճարակային սուբսիդավորման հիմնադրամ, որի միջոցով մոտ 1350 զբոսաշրջային միջոցառումներ ֆինանսավորում են ստացել: Յուրաքանչյուր զբոսաշրջային գործակալություն կարող է ստանալ 80000 ԱՄՆ դոլարի միանվագ լրահատկացում, և զբոսաշրջային գործակալությունների 98%-ը գրանցվել է վճարման համար:

Ավստրալիայում ներդրվել է 10,3 միլիարդ դոլար արժողությամբ խթանման ծրագիր, ինչպես նաև նախատեսվել է առաջիկա վեց ամսվա ընթացքում ծախսել լրացուցիչ 38,3 միլիարդ դոլար, որոնց շրջանակում կառավարությունը պարտավորվել է 613 միլիոն ԱՄՆ դոլարով աջակցել այն ոլորտներին (ներառյալ զբոսաշրջությունը), շրջաններին և համայնքներին, որոնք անհամաչափ ազդեցություն են կրել վիրուսից:

Ֆրանսիան ստեղծել է Համերաշխության հիմնադրամ՝ 2 միլիարդ եվրոյի չափով, որին կարող են դիմել զբոսաշրջության բազմաթիվ ընկերություններ, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներին. բիզնեսներ, որոնց գործունեությունը փակվել է

[16] ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 16-ի N 298–Ն որոշման հավելված. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/298%D5%AF%D6%85%D5%BC%D6%85%D5%B6.pdf

[17] Արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ որոշ ավիաընկերություններ որոշում են կայացրել ժամանակավորապես չեղարկել իրենց կողմից դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս որոշ ուղղությունների սպասարկումը, 2020. https://www.gov.am/am/news/item/14135/

[18] Tokyo 2020 Olympic torch relay postponed, 2020. https://www.olympic.org/news/tokyo-2020-olympic-torch-relay-postponed

[19] UEFA postpones EURO 2020 by 12 months, 2020: https://www.uefa.com/uefaeuro-2020/news/025b-0ef-35fa07210-adb80b5eb2e7-1000--uefa-postpones-euro-2020/?iv=true

(հիմնականում վերաբերում է սննդի ոլորտին (որոնք 160,000 են), ոչ պարենային առևտրին (140,000), զբոսաշրջությանը (100,000)), ՓՄՁ-ներ, որոնք 2019 թվականի մարտի համեմատ կորցրել են շրջանառությունը 70%-ով, և 1 միլիոն եվրոյից քիչ շրջանառություն ունեցող ՓՄՁ-ներ:

Իսպանիայի կառավարությունը հայտարարել է զբոսաշրջային ոլորտի ընկերություններին (ներառյալ տրանսպորտային ընկերությունները, տաքսիները, հյուրանոցները, ռեստորանները, ավտոմեքենաների վարձույթի ընկերությունները, զբոսաշրջային գործակալությունները, թանգարանները և այլն) 400 միլիոն եվրոյի ֆինանսավորում հատկացնելու մասին (Իսպանիայի պաշտոնական վարկային ինստիտուտի՝ ICO-ի երաշխիքով): Միջոցները գործում են որպես 4 տարվա վարկ, ֆիքսված տոկոսադրույքով (առավելագույնը՝ 1.5%), որի դեպքում ICO-ն երաշխավորում է վարկային կազմակերպություններին՝ իրենց հաճախորդների ռիսկի 50%-ի չափով: Կառավարությունը նաև 200 միլիարդ եվրոյի փաթեթ է գործարկել, որը կօգնի ընկերություններին՝ պաշտպանելու աշխատողներին և ճգնաժամից տուժած մյուս խոցելի խմբերին:

Պորտուգալիայի կառավարությունը ձեռնարկել է ավելի քան 30 նախաձեռնություն՝ ուղղված աշխատողների պաշտպանությանը և COVID-19-ի տնտեսական ազդեցության մեղմմանը՝ հարկաբյուջետային «ընդմիջումներով» և իրացվելիության ներարկմամբ: Կառավարությունը հատուկ շեշտադրել է ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտը՝ ստեղծելով 60 միլիոն եվրոյի վարկային գիծ ոլորտի միկրոբիզնեսների համար և համագործակցելով «Turismo de Portugal»-ի հետ՝ ազգային կարողությունները խթանելու համար[20]:

ՀՀ-ում 2020 թ. մարտի 16-ին Հայաստանի հյուրանոցների ասոցիացիան դիմեց ՀՀ կառավարությանը՝ հարկային պարտավորությունների կատարումը հետաձգելու խնդրանքով[21]: Բացի այդ, «Տուրիզմ Արմենիա» ասոցիացիան ևս դիմել է կառավարությանը՝ առաջարկելով ձեռնարկել որոշակի միջոցներ, մասնավորապես՝ ընկերությունների աշխատակիցների աշխատավարձային ֆոնդի 2/3-ի չափով գումարի սուբսիդավորում 4 ամիս ժամկետով՝ 2019 թ. տվյալ կազմակերպության վճարած շահութահարկի հաշվին (առանց գերազանցելու 2019 թ. վճարված/վճարվելիք շահութահարկի տարեկան գումարը, ինչը նաև խրախուսման միջոց է արդյունավետ և բարեխիղճ աշխատող ընկերությունների համար), հարկային օրենսգրքով սահմանված՝ ս.թ. ապրիլի 20-ին վճարման ենթակա շահութահարկի գումարի վճարման վերջնաժամկետի հետաձգում (առնվազն 4 ամիս ժամկետով) կամ ժամանակացույցի կնքում՝ հետաձգելով հարկերի վճարման վերջնաժամկետը, ինչպես նաև խնդրելով կառավարության միջնորդությունը բանկային և վարկային կազմակերպություններին՝ վարկային պարտավորությունների վճարման ժամանակացույցի հետաձգման հարցում (մինչև 4 ամիս ժամկետով): Ի պատասխան՝ ՀՀ կառավարությունն այլ՝ միասնական լուծումներ է առաջարկել[22]:

ՀՀ կառավարությունը 2020 թ. մարտի 26-ի նիստում հաստատեց COVID-19-ի հետևանքների հակազդման միջոցառումների համապարփակ ծրագիրը[23] և տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների 5 փաթեթները, մարտի 30-ին հաստատվեց ևս 3 փաթեթ, ապրիլի 2-ին՝ մեկ փաթեթ[24]:

Քանի որ COVID-19-ի հետևանքով ամենամեծ վնասը կրում են ՓՄՁ-ները, անդրա-

[20] Covid-19 Related Policy Shifts Supportive of Travel & Tourism Sector, 2020: https://www.wttc.org/government-advice/

[21] Հայաստանի հյուրանոցների ասոցիացիան դիմել է Նիկոլ Փաշինյանին, 2020. https://hraparak.am/post/91f2d3f666bd893c51511ef60bed4239/

[22] Զբոսաշրջային ընկերությունները կրճատում են աշխատողներին, ուղարկում արձակուրդ. անհրաժեշտ է, որ գործադիրը տարբերվող լուծում գտնի ամենաշատը տուժած այս ոլորտի համար. «Տուրիզմ Արմենիա» ասոցիացիայի նախագահ, 2020, https://www.tert.am/am/news/2020/03/23/tourism/3243328

[23] ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N 354 – Լ որոշման հավելված. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf

[24] Կառավարության որոշումներ, https://www.e-gov.am/gov-decrees/calendar/2020/04/

դառնանք կառավարության միջոցառումներից մեկին, որի նպատակն է օգնել հետևյալ ոլորտների ՓՄՁ-ներին՝ մշակող արդյունաբերություն, կացության և հանրային սննդի կազմակերպում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, զբոսաշրջային ծառայություններ, սպասարկման այլ ծառայություններ, առողջապահություն: Շահառու ՓՄՁ-ների շրջանառությունը 2019 թ. պետք է կազմած լինի նվազագույնը 24 մլն դրամ, առավելագույնը՝ 500 մլն դրամ, ունենան բարվոք վարկային և հարկային պատմություն: Օժանդակությունը տրամադրվելու է Ներդրումների աջակցման կենտրոնի միջոցով, իսկ վարկերի սպասարկման գործակալներ կհանդիսանան բանկերը և վարկային կազմակերպությունները: Վարկերը տրամադրվելու են հետևյալ ծախսերի իրականացման նպատակով՝ աշխատակիցներին աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (յուրաքանչյուր աշխատակցի դեպքում՝ ոչ ավելի, քան ամսական 300000 դրամ՝ առավելագույնը երեք ամսվա համար), պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումներ՝ առավելագույնը երեք ամսվա համար, հումքի գնում և ներմուծում, հանրային ծառայությունների վճարումներ, վարձակալական վճարներ: Վարկերի ժամկետը 36 ամիս է, առաջին 6 ամսում վարկի մարում չի նախատեսվում, մեկ տնտեսավարող սուբյեկտի վարկի առավելագույն չափը 50 մլն դրամ է (բայց ոչ ավելի, քան վերջինիս 2019 թ. շրջանառության 10%-ը), տոկոսները՝ առաջին և երկրորդ տարիներին՝ 0%, երրորդ տարում՝ 12%[25]:

Իհարկե, դեռ վաղ է հստակ գնահատել, թե որքանով բավարար կլինեն վերոնշյալ միջոցառումները զբոսաշրջային ոլորտի կազմակերպությունների համար, և թե վերջիններիս վնասը որքան կկազմի:

Եթե ըստ ԶՀԿ նախնական գնահատականի՝ նաև ՀՀ-ում արձանագրվի զբոսաշրջիկների թվի նվազում 1-3%-ի չափով, ապա դա կկազմի 18.944-56.831 զբոսաշրջիկ (2019 թ. ՀՀ ներգնա 1.894.377 զբոսաշրջիկների թվի 1-3%-ը): Սակայն, այս կանխատեսումն արվել է այն ժամանակ, երբ դեռ մի շարք երկրներ չէին անցել արտակարգ դրության և ամբողջ աշխարհում չվերթերը չեղարկված չէին: Ուստի, ներկա պայմաններում զբոսաշրջիկների թվաքանակի 1-3% անկումը կարելի էր համարել չարյաց փոքրագույնը, քանի որ 2019 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում ՀՀ է եկել 770055 զբոսաշրջիկ, և ավելի վատատեսական սցենարի պարագայում մենք կարող ենք նշված թվաքանակի էական կրճատում ունենալ 2020 թ. համար: Ըստ զբոսաշրջության ոլորտի պատասխանատուների՝ 2020 թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած շուրջ 175000 զբոսաշրջիկ չի այցելել Հայաստան[26], իսկ թե երկրորդ եռամսյակում նախորդ տարվա հետ համեմատած զբոսաշրջիկների թվաքանակն ինչքան կնվազի, կախված է այն բանից, թե համաշխարհային մասշտաբով որքան արագ կհաջողվի կանխել վարակի տարածումը, և երբ կբացվեն փակ սահմաններն ու կվերականգնվեն չվերթերը: Իհարկե անիմաստ է այդ ամենից հետո ակնկալել զբոսաշրջիկների թվաքանակի շատ արագ ներհոսք, ուստի ոլորտի զարգացման տեմպերի վերականգնումն ավելի դանդաղ կկատարվի:

Նշենք նաև, որ 2019 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում ներգնա զբոսաշրջիկների ծախսած գումարն ըստ վճարային հաշվեկշռի կազմել է 532 մլն ԱՄՆ դոլար, առաջին եռամսյակում՝ 253.8 մլն դոլար[27]: Եթե 2019 թ. առաջին եռամսյակում մեկ զբոսաշրջիկի ծախսած միջին 696 դոլարով հաշվարկենք, ապա կարող ենք ասել, որ 2020 թ. առաջին եռամսյակում 175000 չայցելած զբոսաշրջիկից ստացվող հնարավոր գումարը 121.8 մլն դոլար կկազ-

[25] ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N 357 – Լ որոշման հավելված. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/357-%D4%BC.pdf

[26] Հայաստանը մեծ փողեր է կորցրել. 175 000 զբոսաշրջիկ կարող էին գալ, բայց չեն եկել, 2020, https://armeniasputnik.am/tourism/20200330/22569158/hayastan-zbosashrjik-175-000-koronavirus.html

[27] ՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

մեր, ուստի 2020 թ. առաջին եռամսյակում արդեն իսկ այդքան գումարի կորուստ ենք ունեցել:

Հուսանք, որ վիրուսի տարածման տեմպերը կնվազեն և խնդիրը կունենա կարճաժամկետ բնույթ ու զբոսաշրջային պիկ սեզոն համարվող ամռան ամիսներին արդեն խնդիրներ չեն լինի և ոլորտը կսկսի աստիճանաբար աշխուժանալ: Այդ դեպքում վնասի չափն այդքան մեծ չի լինի: Հակառակ դեպքում, եթե իրավիճակն ավելի սրվի և երկարի, Հայաստանում վերջին տարիներին արագ տեմպերով զարգացող զբոսաշրջության ոլորտը, որի համախառն ազդեցությունը ՀՆԱ-ում 14% է, կարող է հայտնվել լուրջ ճգնաժամային իրավիճակում, ինչը բազմարկչի էֆեկտով կազդի տնտեսության այլ ոլորտների վրա ևս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արտակարգ իրավիճակով պայմանավորված որոշ ավիաընկերություններ որոշում են կայացրել ժամանակավորապես չեղարկել իրենց կողմից դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս որոշ ուղղությունների սպասարկումը, 2020, https://www.gov.am/am/news/item/14135/
2. Գայանե Թովմասյան, Ինչպիսի՞ն էր ՀՀ զբոսաշրջության ոլորտը 2019 թվականին և ի՞նչ սպասել 2020 թ. «կորոնավիրուսային համատեքստում», https://asue.am/amberd/publication/analytics/what-was-the-ra-tourism-sphere-in-2019-and-what-to-wait-for-2020-in-the-coronavirus-context
3. Զբոսաշրջային ընկերությունները կրճատում են աշխատողներին, ուղարկում արձակուրդ. անհրաժեշտ է, որ գործադիրը տարբերվող լուծում գտնի ամենաշատը տուժած այս ոլորտի համար. «Տուրիզմ Արմենիա» ասոցիացիայի նախագահ, 2020, https://www.tert.am/am/news/2020/03/23/tourism/3243328
4. Իրանի հետ սահմանը փակ կմնա մինչև մարտի 24-ը, 2020, https://banks.am/am/news/newsfeed/18661
5. Կառավարության որոշումներ, https://www.e-gov.am/gov-decrees/calendar/2020/04/
6. Կորոնավիրուսից զբոսաշրջության ոլորտի վնասը կարող է $22 մլրդ կազմել, 2020, https://banks.am/am/news/newsfeed/18645?fbclid=IwAR2_SydgY8JopucN0w7_iMGe6qTkMQQfJmyaF7bKDos0JXfLraXtYNz1qpA
7. Կորոնավիրուսի պատճառով եվրոպացի հազարավոր զբոսաշրջիկներ չեղարկել են հայաստանյան հյուրանոցներում մարտ-ապրիլի համար արված ամրագրումները, 2020, https://www.tert.am/am/news/2020/02/29/cancellation/3224005
8. Հայաստանի հյուրանոցների ասոցիացիան դիմել է Նիկոլ Փաշինյանին, 2020, https://hraparak.am/post/91f2d3f666bd-893c51511ef60bed4239
9. Հայաստանը մեծ փողեր է կորցրել. 175 000 զբոսաշրջիկ կարող էին գալ, բայց չեն եկել, 2020, https://armeniasputnik.am/tourism/20200330/22569158/hayastan-zbosashrjik-175-000-koronavirus.html
10. ՀՀ կառավարության որոշում, 16-ը մարտի, 2020, 298–Ն, Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին, https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/?fbclid=IwAR00jM_nHx8p74INxfEdItbpOOgAFu9aeZqpH-74o8FZK6dLkKv7WOgHTew
11. ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 16-ի N 298–Ն որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/298%D5%AF%D6%85%D5%BC%D6%85%D5%B6.pdf
12. ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N 354–Լ որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf
13. ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N 357–Լ որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/357-%D4%BC.pdf
14. ՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
15. Հունվարին ԵՄ զբոսաշրջության ոլորտը կորոնավիրուսի պատճառով 1 միլիարդ եվրո է կորցրել, 2020, https://news.am/arm/news/563363.html
16. 2 ամսով կասեցվում է Չինաստանի քաղաքացիների համար ՀՀ մուտքի վիզայի ազատ ռեժիմը, 2020, https://www.azatutyun.am/a/30410182.html
17. ARMENIA, 2019 ANNUAL RESEARCH: KEY HIGHLIGHTS, World Travel and Tourism Council, https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/
18. Coronavirus: Italy's tourism industry reports 'worst crisis in recent history' after outbreak, 2020, https://www.thelocal.it/20200227/coronavirus-italian-regions-warn-tourism-is-on-its-

knees-after-outbreak
19. Coronavirus puts up to 50 million Travel and Tourism jobs at risk says WTTC, 2020, https://www.wttc.org/about/media-centre/press-releases/press-releases/2020/coronavirus-puts-up-to-50-million-travel-and-tourism-jobs-at-risk-says-wttc
20. Covid-19 Related Policy Shifts Supportive of Travel & Tourism Sector, 2020, https://www.wttc.org/government-advice/
21. Impact assessment of the COVID-19 outbreak on international tourism, UNWTO, 2020, https://webunwto.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/2020-03/UNWTO-Impact-Assessment-COVID19.pdf
22. Isabelle Durant, Tourism – A life line in free fall, 2020, https://unctad.org/en/pages/news-details.aspx?OriginalVersionID=2312
23. Tokyo 2020 Olympic torch relay postponed, 2020, https://www.olympic.org/news/tokyo-2020-olympic-torch-relay-postponed
24. Transport-related CO2 emissions of the tourism sector, Modelling results, UNWTO, 2019, p. 11, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284416660
25. TRAVEL & TOURISM ECONOMIC IMPACT 2019, WORLD, https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/
26. UEFA postpones EURO 2020 by 12 months, 2020, https://www.uefa.com/uefaeuro-2020/news/025b-0ef35fa07210-adb80b5eb2e7-1000--uefa-postpones-euro-2020/?iv=true

ГАЯНЕ ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ОТРИЦАТЕЛЬНОЕ ВЛИЯНИЕ COVID-19 НА СФЕРУ ТУРИЗМА: МИР И АРМЕНИЯ

Число туристов в Армении в последние годы увеличивается. В статье представлено потенциальное негативное влияние COVID-19 на туризм в Армении и других странах, обсуждались меры, предпринятые рядом стран и Армением по смягчению потенциальных негативных последствий COVID-19, были также сделаны некоторые предварительные прогнозы.

Ключевые слова: *туризм, кризис, полет, COVID-19*

GAYANE TOVMASYAN
Senior Researcher at AMBERD Research Center, ASUE, PhD in Economics

THE NEGATIVE IMPACT OF COVID-19 ON TOURISM SPHERE: WORLD AND ARMENIA

The number of tourists in Armenia has been increasing in recent years. The article presents the potential negative impact of COVID-19 on tourism sphere in Armenia and in other countries was presented, the measures taken by a number of countries and Armenia to mitigate the potential negative effects of COVID-19 were discussed, and some preliminary predictions were done.

Keywords: *tourism, crisis, flight, COVID-19*